

ՏԱՐԻՆԵՐ ԵՎ ՎԱՍՏԱՆԻ



Լրացավ Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, պետական մրցանակի դափնեկիր, Մեսրոպ Մաշտոց շքանշանի ասպետ, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Բեդլարի Ջահոպյանի ծննդյան 80-ամյակը:

Գիտություն, դասախոսական, կազմակերպչական աշխատանք. ահա գործունեության այն գլխավոր ոլորտները, որոնցից, անկասկած, առաջնությունը պետք է տալ գիտությանը, քանի որ դասախոսել, ամբիոններ է վարել և Լեզվաբանության ինստիտուտը շուրջ 40 տարի ղեկավարել է առաջին հերթին մեծ գիտնականը:

Գևորգ Ջահոպյանի գիտական Հետաքրքրությունների ոլորտը աչքի է ընկնում բացառիկ լայնությամբ և թափանցանությամբ: Արժանահիշատակ Վիկտոր Համբարձումյանը Հետևողականորեն տարբերակում էր գիտությամբ զբաղվող, գիտական աշխատող և գիտնական ըմբռնումները՝ վերջինս Համարելով բացառիկների մեծաշնորհ: Գևորգ Ջահոպյանը անվերապա հորեն այս ընտրյալների շարքն է դասվում: Հայերենագիտության մեջ չկա մի բնագավառ, որտեղ իր վճռական խսարն ու ծանրակշիռ ներդրումը չունենա Գ.Ջահոպյանը: Նա Հայերենի Համահայտական քերականության տեսաբանն ու ամենաճանաչված մասնագետն է: «Հին Հայերենի Հոլովման սիստեմը և նրա ծագումը» աշխատության մեջ (1959), որ ուղենշային հղավ այդ բնագավառի Հետադա Հետազոտությունների Համար, Գ. Ջահոպյանը, մասնավորապես առանձնացնում է Հին Հայերենի Հոլովման բոլոր տիպերը ըստ Հիմքակաղմական և ձևակաղմական սուսնձնահատկությունների և, որ շատ արժեքավոր է, սահմանում է Հոլովման տարբեր տիպերին բառերի սլառականելության օրինաչափությունները: Ավելի ուշ, այս բնագավառում Հեղինակի երկարամյա Հետազոտությունների արդյունքները ամփոփվեցին «Сравнительная грамматика армянского языка» (1982) մենագրության մեջ:

Ծանրակշիռ ներդրում ունի Հայերենի Համեմատական ուսումնասիրության և Հնդեվրոպարանության բնագավառում: Առաջինն էր, որ քննեց Հնդեվրոպական, խուռա-ուրարտական և կովկասյան լեզուների փոխհարաբերությունը, Հաստատեց Հայասերենի Հնդեվրոպական-Հին անատոլիական բնույթը՝ որոշելով նրա դիրքը Հնդեվրոպական լեզուների շարքում: Նշանակալից են Հայերենի փոխառնությունների Հարցին նվիրված ուսումնասիրությունները, ուր քննվում են Առաջավոր Ասիայի Հնդեվրոպական և ոչ-Հնդեվրոպական

լեզուները հետ հայերենի հնարավոր կապերը՝ հստակ տարբերակելով ծագումնաբանական ընդհանրությունները փոխառություններից:

Լայն ճանաչում են ստացել Գ.Ջահուկյանի՝ Հնդեվրոպաբանության բնագավառին մեբաբրոդ ուսումնասիրությունները, ուր քննվում են Հնդեվրոպական եախալեզվի վերականգնման, նրա բարբառային մասնատվածության, հիմք լեզվի մեջ ժամանակագրական տարբեր շերտերի հարցերը, ինչպես նաև նոստրատիկ լեզվաբանության խնդիրները: Այստեղ կարևորագույն ձեռքբերումներն են Գ.Ջահուկյանի այն վարկածն է, որ նախալեզուն չի կարելի վերականգնել որպես միասնական ստանդարտ լեզու: Լեզվի նախագրային ժամանակաշրջանի պատմությունը նվիրված բազմամյա հետազոտությունների արդյունքները ամփոփված են «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» (1987) աշխատության մեջ, որի համար հեղինակը արժանացել է պետական մրցանակի: Ընդգծված նպատակասլացությանը է աչքի ընկնում Գ.Ջահուկյանի գործունեությունը բարբառագիտության բնագավառում, նախ այն պատճառով, որ սա այն դեպքերից է, երբ հեղինակի տեսական գործունեությունը իր լիարժեք կիրառումն է գտնում բարբառագիտական ատլասի կազմման գործում, քանի որ նրա ղեկավարությանը մշակվեց հայերենի համար այդ կարևորագույն բնագավառի համալիր ծրագիր՝ հիմքում ունենալով նրա «Հայ բարբառագիտության ներածություն: Վիճակագրական բարբառագիտություն» (1972) աշխատությունը, որի ուրվագծերը կապվում են 50-ական թվականների՝ Հայ բարբառների վերաբերյալ բանավեճի հետ, երբ Գ.Ջահուկյանի համար ակնհայտ դարձավ, որ դրանք պետք է դասակարգել հատկանիշների մի ամբողջ խմբի հիման վրա, և որպես դասակարգման հիմք ընտրեց 100 հատկանիշ, որոնք արտացոլում են լեզվական համակարգի տարբեր կողմերը:

Աշխատության երկրորդ մասում Գ.Ջահուկյանը քննում է հայերենի զարգացման տարբեր շրջաններում գրական լեզվի և բարբառների, գրաբարում բարբառային հնարավոր հետքերի, ժամանակակից բարբառներում հնչյունական, քերականական և բառային հնաբանությունների հայտնաբերման, ի դրաբարային իրավիճակի հարցերը: Հիշարժան է Գ.Ջահուկյանի այն կարծիքը, որ հին հայերենի շրջանի նախնական փուլում բարբառային տարրերակումը ավելի թույլ դրսևորում ուներ, քան հետագա շրջաններում:

Համընդհանուր ընդունելության է արժանացել Գ.Ջահուկյանի՝ Հայոց լեզվի գրավոր փուլի շրջանաբաժանումը՝ «Հին հայերեն», «գրաբար», «միջին հայերեն», «նոր հայերեն», «աշխարհաբար» տերմինների առավել ճշգրտմամբ:

Գ.Ջահուկյանի բաղմապարփակ դիտական ժառանգության մեջ առանձնանում են արդի հայերենի կառուցվածքին նվիրված հետազոտությունները, որոնց արդյունքները ամփոփված են «Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը» (1969) և հատկապես «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» (1974) հիմնարար աշխատության մեջ: Այստեղ վճռականը ժամանակակից առաջավոր լեզվաբանական մտքի նվաճումների հաշվառմամբ Գ.Ջահուկյանի կողմից առաջ քաշված լեզվաբանական նկարագրության նոր եղանակի առաջադրումն է, որ հեղինակն անվանում է բովանդակության և արտահայտության պլանների հարաբերակցված քննության սկզբունք: Երկրորդ աշխատության մեջ, որ նվիրված է լեզվական կառուցվածքի ամբողջական նկարագրությանը, ձևաբանությունից բացի, ներկայացված են հնչյունաբանությունը, գրաբանությունը և շարժաբանությունը, ինչպես նաև

շարաշյուսությունը, որ սահմանված է իբրև բառակապակցությունների, նախադասությունների և նախադասության կապակցությունների ուսմունք:

Չհարանություն բաժնում քննվում են ըստ խոսքի մասերի բառերի դասակարգման, բառի ձևաբանական կառուցվածքի և հիմքակազմության հարցերը:

Ստորոգումը համարելով նախադասության հիմնական հատկանիշը՝ նախադասությունը համարվում է բայական կարգերի ծավալման վերջնական արդյունք: Այստեղ կարևոր է նաև բառակապակցությունների և նախադասությունների ուսմունքի հստակ սահմանադատումը:

Մանրակիտ ին նաև Գ.Ջազուկյանի՝ տեսական լեզվաբանությանը նվիրված աշխատանքները, որոնց արդյունքները ամփոփված են «Общие и частные языковые категории в армянском языке» գրքում (1978), ուր հեղինակը ներկայացնում է լեզվաբանական դիտարկումների և լեզվաբանական բաժինների դասակարգումը: Ըստ նրա, լեզվաբանական դիտարկումները հանգում են լեզվաբանության մասերին:

Լեզվական մակարդակների հարցում Գ.Ջազուկյանը ինքնուրույն մոտեցում ունի: Ելնելով ընդհանրական տեսության համար անհրաժեշտ չափանիշներից անհատականությունը, պարզությունը, տնտեսման սկզբունքը, նա մեկնում է տարրության (աարբերակիչ հատկանիշներ) կամ մերկվածության մակարդակի գոյություն իրավունքը:

Ընդհանուր լեզվաբանության կարևորագույն՝ լեզվի և խոսքի փոխհարաբերության հարցում ևս Գ.Ջազուկյանը իր հստակ դիրքորոշումն ունի: Լեզուն բնութագրվում է իբրև մարդու, լեզվական որոշ հանրության և անհատի ունեցվածք, խոսքը հակադրվում է վերջինին, և դրանով լեզվի և խոսքի հակադրությունը դիտվում է ոչ թե հասարակականի և անհատականի, այլ հնարավորի և իրականի հակադրություն:

Գ.Ջազուկյանի ընդհանուր լեզվաբանական աշխատանքները ուղիղվում էին նախընթաց տասնամյակների ընթացքում, որոնց ամփոփումը կզավ «Լեզվաբանության պատմություն» մեծարժեք երկհատորյալը՝ յուրատեսակ լեզվաբանական հանրագիտարան, որն ընդգրկում է Միջազգային, Եզրագրային միջև խորհրդային լեզվաբանություն ընկած ժամանակաշրջանը՝ սկսած անհատական շրջանառության մամբ, լեզվաբանական ուղղությունների և ուսմունքների սկսական, չատ հաճախ ինքնատիս բնութագրմամբ:

Այս հոլանդիկ թվարկումն իսկ ցույց է տալիս դիտական հետաքրքրությունների համապարփակ բնույթը, լայն մտահորիզոնը: Մշտապես գիտության այսօրվա հետ քայլելու հարատև ու բնական պահանջը նրան դարձնում են ցանկալի դասախոս և որոնի տնօրեն: Տասնամյակներ առաջ երևանում ընթացող լեզվի պատմության և բարբառագիտության հարցին նվիրված համամիջակական շատ ներկայացուցչական դիտադրում, կրք ներկայացվեց Լեզվաբանության ինստիտուտի կառուցվածքն ու թեմատիկան, նույնիսկ շատ հեղինակավոր ու բազմալստատ լեզվաբաններ հաճելիորեն զարմացած էին ե նշեցին, որ ինստիտուտը իր պատվավոր տեղն ունի, որ ամբողջովին համապատասխանում է ՀՀ ԳԱԱ ունեցած հեղինակությունը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

բանասիրության դոկտոր, պրոֆեսոր